ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 2023 թ. գործունեության ամփոփ հաշվետվություն

Ի կատարումն ՀՀ կառավարության 2021 թ. նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) դրույթների՝ 2023թ. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից իրականացվել են հետևյալ խոշոր ծրագրերն ու միջոցառումները.

- **Գիտության ոլորտում պետական ֆինանսավորման արդյունավետության բարձրացում, ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված կապիտալ ծախսային միջոցառումներ, մրցութային ծրագրեր.**

- 2023 թ. պետական բյուջեով գիտության ոլորտին առաջին անգամ հատկացվել են կապիտալ բնույթի ծախսային միջոցառումների համար միջոցներ՝ 4.2 մլրդ ՀՀ դրամի չափով:

- 2023 թ. իրականացվել է 20 մրցութային ծրագիր, ինչը ռեկորդային ցուցանիշ է նախորդ տարիների համեմատ: Այդ ցուցանիշը յուրաքանչյուր տարի միջինում կազմել է 10 մրցույթ:

- Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու ու համատեղ օգտագործման գիտական սարքավորումների կենտրոնների ստեղծման նպատակով (Ծրագրի 27.1 կետ)՝ 2023թ. 2 անգամ հայտարարվել է սարքերի ձեռք բերման մրցույթ, որի նպատակով գիտական կազմակերպությունները ներկայացրել են 233 (114+119) սարքավորման հայտ՝ ընդհանուր 22.1 մլրդ դրամ արժեքով, որոնցից գիտական փորձաքննության արդյունքում ձեռքբերման է երաշխավորվել 95 (54+41) սարքավորում՝ 7.1 մլրդ դրամ ընդհանուր արժեքով: Դա ավելին է, քան նույն նպատակով կազմակերպված նախորդ բոլոր մրցույթների արդյունքում տրամադրված միջոցների հանրագումարը (2013-2022թթ.՝ շուրջ 5,9 մլրդ):

Թվականը	Կոմիտեից տրամադրված գումարը (հազար ՀՀ դրամ)
2013	289,133.00
2014	260,700.00
2015	298,667.80
2019	437,832.80
2020	358,726.00
2021	1,354,297.30
2022	2,932,527.00
Ընդամենը՝ 2013-2022թթ.	**5,931,883.90**

- Գիտական ստորաբաժանումների զարգացման ծրագրի շրջանակում առաջին անգամ իրականացվել է մրցունակ գիտական ստորաբաժանումների հագեցվածությանն ուղղված մրցութային ծրագիր, որի բյուջեն ամբողջությամբ ուղղվել է փոքր և ամենօրյա կիրառություն ունեցող գիտական սարքավորումների և նյութերի ձեռքբերմանը: Մրցույթի արդյունքում ստացվել է 99 հայտ՝ ընդհանուր 1,6 մլրդ դրամ գումարային արժեքով, որից փորձաքննության արդյունքում ֆինանսավորման է երաշխավորվել 60 հայտ՝ ընդհանուր 932 մլն դրամ գումարային արժեքով:

- Գիտական կենտրոնների վերանորոգման շրջանակում (Ծրագրի 27.2)՝ «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր 2023» մրցույթի արդյունքում ֆինանսավորման է երաշխավորվել 15, իսկ «ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր 2023 և 2023/2» մրցույթների արդյունքում՝ ընդհանուր թվով 6 գիտական խումբ, որոնց 5 տարվա համար տրամադրվում է շուրջ 150 մլն դրամ ֆինանսավորում, այդ թվում նաև՝ լաբորատոր միջավայրի բարեկարգման կամ վերազինման նպատակով: Արդյունքում 2024 թվականին 21 խումբ կունենա վերանորոգված և աշխատանքային բարձր չափանիշներին համապատասխանող միջավայր *(2023 թվականի դրությամբ արդեն 107 նմանատիպ խումբ ստացել է աշխատանքային միջավայրի բարեկարգմանն ուղղված միջոցներ):*

Նշված երկու ծրագրերի հիմնական նպատակը արտերկրյա գիտնականների ներգրավմամբ Հայաստանի գիտական կազմակերպություններում հեռանկարային, ժամանակակից գիտական ուղղություններով նոր ստորաբաժանումների ստեղծումն է,

իսկ շահառուներն արտերկրում բնակվող բարձր վարկանիշ ունեցող հայազգի կամ օտարազգի գիտնականներ են:

«ՀՀ գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր 2023 և 2023/2» մրցույթների շրջանակում ստացված՝ 7 տարբեր երկրներից՝ ղեկավարների ներգրավմամբ 21 /15+6/ հայտերից ֆինանսավորման է երաշխավորվել ԲՏՃՄ ոլորտի 6 /5+1/ նախագիծ, որոնց ղեկավարները ներկայացնում են ՌԴ-ն, Կանադան և Չինաստանը, և որոնցից 4-ը սփյուռքի ներկայացուցիչներ են:

«Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր 2023» մրցույթի շրջանակում ստացված՝ 21 տարբեր երկրներից ղեկավարների ներգրավմամբ 48 հայտերից ֆինանսավորման է երաշխավորվել ԲՏՃՄ ոլորտի 11 և հասարակագիտության ոլորտի 4 նախագիծ, որոնց ղեկավարները ներկայացնում են 10 տարբեր երկրներ /ԱՄՆ, ՌԴ, ՄԹ, ԻԻՀ, Բելգիա, Գերմանիա, Ֆինլանդիա, Ավստրիա, Դանիա, Կոլումբիա/, և որոնցից 5-ը սփյուռքի ներկայացուցիչներ են: Նախագծի հայաստանյան համաղեկավարների 26.6% կանայք են:

- Հայտարարվել է «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2023» մրցույթը. ընտրվել է 42 հայտ: Կազմակերպվել է 10 ասպիրանտների և հայցորդների նպատակային ուսուցում արտերկրի լավագույն կենտրոններում:

- 2023 թ. հունվարին կազմակերպվել է Գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման՝ 2-12 ամիս տևողությամբ ծրագրերի հայտերի ընտրության մրցույթ: Մրցույթին դիմելու համար սահմանված են եղել երկու վերջնաժամկետներ՝ 2023 թվականի հունվարի 27-ը և 2023 թվականի հուլիսի 28-ը: Առաջին փուլի արդյունքներով 2023 թվականի ապրիլից ֆինանսավորման են երաշխավորվել 5 ծրագրեր, իսկ երկրորդ փուլով՝ 2023 թվականի մայիսից՝ մեկ ծրագիր:

- 2023 թ. հունվարին և հուլիսին կազմակերպվել են «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc» ծրագիր 2023/1 և 2023/2» մրցույթը. ֆինանսավորման է երաշխավորվել 8+4 նախագիծ՝ 12-24 ամիս տևողությամբ:

2023 թ. նոյեմբերին հայտարարվել է նոր՝ «Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2024»» մրցույթ, որին դիմելու վեջնաժամկետն է 2024 թ. հունվարի 12-ը:

- ՀՀ ԲՏԱՆ ՌԱԿ-ի հետ համատեղ 2023 թ. իրականացվել է Երկակի նշանակության ծրագրերի աջակցության ամենամյա մրցույթը (Ծրագրի 29.7 կետ), որն ամփոփվել է 2 անգամ. 1-ին փուլով ստացված 34 հայտերից ֆինանսավորվել են 6-ը, իսկ 2-րդ փուլով՝ 23 հայտերից 9-ը:

- 2023թ. ամփոփվել է 2022թ. առաջին անգամ հայտարարված փորձարարական մշակումների դրամաշնորհային ծրագիրը, որի գնահատման ժամանակ առաջին անգամ կիրառվել է տեխնոլոգիաների պատրաստության աստիճանի միջազգային սանդղակը (TRL grades). ֆինանսավորման է երաշխավորվել 6 ծրագիր:

- 2023թ. հունվարի 1-ից զգալիորեն ավելացել են գիտաշխատողների աշխատավարձերը (Ծրագրի 29.1 կետ)՝ համաձայն ՀՀ կառավարության կողմից 2021 թ. մայիսի 13-ի N 747-Լ որոշմամբ հաստատված՝ 2022-2025 թթ. բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի նվազագույն պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցների աղյուսակի: Ատեստավորում անցած գիտական և ճարտարագիտական աշխատողների բազային պետական աշխատավարձի աստիճանական աճը կշարունակվի մինչև 2025 թ.:

Տարակարգ/պաշտոն	**2021 թ.**	**2023թ.**
լաբորանտ կամ ճարտարագետ	67.3 հազ. դրամ	110.0 հազ. դրամ
ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ	76.0 հազ. դրամ	130.0 հազ. դրամ
կրտսեր գիտաշխատող	85.8 հազ. դրամ	150.0 հազ. դրամ
գիտաշխատող	90.4 հազ. դրամ	200.0 հազ. դրամ
ավագ գիտաշխատող	99.0 հազ. դրամ	250.0 հազ. դրամ
առաջատար գիտաշխատող	114.3 հազ. դրամ	350.0 հազ. դրամ
գլխավոր գիտաշխատող	138.1 հազ. դրամ	450.0 հազ. դրամ
գիտական խմբի ղեկավար	129.1 հազ. դրամ	280.0 հազ. դրամ
գիտական ստորաբաժանման ղեկավար	141.4 հազ. դրամ	400.0 հազ. դրամ

- **Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին ուղղված աջակցության ծրագրեր**

ՀՀ կառավարությունը հոկտեմբերի 12-ի N 1762-Լ որոշմամբ հաստատել է 2023 թ. սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների՝ 2023-2024 ուստարվա ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման նպատակով կրթաթոշակի տրամադրման կարգը և տրամադրվելիք կրթաթոշակի առավելագույն չափերը՝ ըստ կրթական ծրագրերի:

Ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության հավաքագրած տեղեկատվության՝ 2023 թ. սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվել են 4640 ուսանողներ, որոնցից 2116-ը ԼՂ-ում սովորել են բարձրագույն ուսումնական հաստատություններում, իսկ 2524-ը՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

2023թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ ԼՂ-ից բռնի տեղահանված ԼՂ բուհերի շուրջ 1900 ուսանող արդեն իսկ ներգրավված է ՀՀ պետական բուհերի համապատասխան կամ հարակից կրթական ծրագրերում, որոնցից մոտ 90 տոկոսը՝ ՀՀ պետական բուհերում:

ՀՀ կառավարությունը 2023թ. դեկտեմբերի 21-ի N 2291-Լ որոշմամբ հաստատել է նաև ՀՀ նախնական (արհեստագործական), միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների վճարովի համակարգում մինչև 2023թ. սեպտեմբերի 19-ն ընդգրկված սովորողների ուսման վարձի փոխհատուցման տրամադրման կարգը: ՀՀ կառավարության կողմից իրականացվող այս երկրորդ ծրագրով ուսման վարձի փոխհատուցում է նախատեսվում ՀՀ բուհերում սովորող ԼՂ բնակիչ հանդիսացող և 2023 թվականի սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված ընտանիքների ուսանողների համար: Նախնական հայտերի հիմքով աջակցության ենթակա է 844 շահառու:

2023թ. նոյեմբերի 14-ին ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հանրակրթական, նախնական և միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների ավարտական փաստաթղթերի կրկնօրինակի տրամադրման կարգը:

- **Բարձրագույն կրթության ոլորտի գործունեության ամփոփում**

- Սահմանված կարգով իրականացվել է ՀՀ բուհերի ուսանողներին տրամադրվող ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման գործընթացը:

- *ՀՀ ԿԳՄՄՆ-ն հրապարակային հրավիրել է ՀՀ պետական բուհերին և գիտահետազոտական կազմակերպություններին՝ ներկայացնելու հայեցակարգային առաջարկություններ ՀՀ պետական բուհերի խոշորացման և գիտահետազոտական կազմակերպությունների հետ միավորման գործընթացի վերաբերյալ:* Հայեցակարգային առաջարկներն ընդունվելու են մինչև 2024 թվականի փետրվարի 15-ը: Այս ընթացքում ակնկալվում է, որ բուհերն ու գիտահետազոտական կազմակերպությունները կծավալեն մասնագիտական քննարկումներ, որոնց ավարտին ՀՀ ԿԳՄՄՆ կներկայացվի ՀՀ վարչապետի 2022թ. N1314-Ա որոշմամբ ձևավորված աշխատանքային խմբի քննարկումների արդյունքում առանձնացված ուղղություններին (դասական, բժկական, կրթական, արվեստների, տեխնոլոգիական, սպայական) համապատասխան խոշորացված բուհի առաջարկ, որը կներառի խոշորացվող բուհերի և միացող գիտահետազոտական կազմակերպությունների ցանկը, դրանց կառուցվածքը, կառավարման համակարգը, իրականացվող կրթական ծրագրերն ու գիտահետազոտական ուղղությունները, ինչպես նաև պլան-ժամանակացույցը, կարողունակությունների զարգացման ծրագրերի անհրաժեշտ ցանկը և հնարավոր գործընկեր միջազգային կազմակերպությունների ցուցակը:

Բուհերի խոշորացման գործընթացը սերտորեն առնչվում է Ակադեմիական քաղաք ծրագրին, որի շրջանակում նախատեսվում է խոշորացված բուհերի և միավորված գիտահետազոտական կազմակերպությունների համար ստեղծել նոր և ժամանակակից լավագույն չափանիշներին համապատասխան ֆիզիկական ենթակառուցվածքներ և

միջավայր, որտեղ կլաստերների տեսքով կտեղակայվեն և կգործեն այդ հաստատությունների մեծ մասը:

Գործընթացին աջակցելու նպատակով ՀՀ ԿԳՄՍՆ-ն կկազմակերպի մասնագիտական քննարկումներ, աշխատաժողովներ և փորձագիտական աջակցություն, այդ թվում, ըստ անհրաժեշտության, միջազգային փորձագետների ներգրավմամբ:

Նախատեսվում է, որ 2027 թվականից պետական ֆինանսավորում և աջակցություն կտրամադրվի միայն խոշորացված բուհերին և դրանց հետ միավորված գիտական կազմակերպություններին:

Խոշորացված բուհերում և դրանց հետ միավորված գիտահետազոտական կազմակերպություններում նախատեսվելու է աշխատավարձերի կրկնապատկում: Էականորեն վերանայվելու է դասախոսների աշխատանքի կառուցվածքը՝ էական շեշտադրում անելով հետազոտական բաղադրիչի ավելացման վրա, իսկ գիտական աշխատողների համար ստեղծվելու են մրցունակ հետազոտական աշխատանքներ և մշակումներ իրականացնելու անհրաժեշտ պայմաններ:

Ներկայացված հայեցակարգային առաջարկները կքննարկվեն այդ նպատակով ձևավորված գնահատող մասնագիտական հանձնաժողովում, այնուհետև յուրաքանչյուր ուղղությանը համապատասխանող բուհերի և միավորված գիտահետազոտական կազմակերպությունների համար կկազմվեն վերջնական հայեցակարգեր:

- ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 23-ի N 383-Ն որոշմամբ սահմանվել են են բուհերի և բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով համապատասխան մասնագիտությունների ցանկը, որոնցում առկա ուսուցմամբ ընդունված քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տրամադրվել է տարկետում: Կիրառվել է 2023-2024 ուսումնական տարվանից, ԵՊՀ-ում, ՀԱՊՀ-ում ֆիզիկայի և քիմիայի ուղղությամբ համապատասխան կրթական ծրագրերով բակալավրի կրթական աստիճանում սովորելու համար շուրջ 100 արական սեռի քաղաքացի ստացել է տարկետում այս կարգի շրջանակում: Ներկայում աշխատանքներ են տարվում, մշակման փուլում է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է վերանայել, ընդլայնել ԲՏՃՄ մասնագիտությունների ցանկը /բուհերի

և համապատասխան մասնագիտությունների ընտրության համար հիմք են հանդիսացել միջազգային վարկանիշային աղյուսակներում դիրքավորված լինելու հանգամանքը, միջազգային չափանիշներից համալսարանի հետազոտության որակը /ըստ ֆակուլտետների մեջբերումով՝ հաշվի առնելով հինգ տարվա ընթացքում բուհի կողմից տպագրված հոդվածներում ակադեմիական մեջբերումների ընդհանուր թիվը/:

- 2023-2024 ուստարում գործարկվել են բուհերում կրթաթոշակի նոր մոտեցումներ.

ՀՀ կառավարության 24 օգոստոսի 2023 թվականի N 1430-Ն որոշմամբ հաստատվել են ՀՀ բուհերում առկա ուսուցմամբ սովորողներին տրվող պետական կրթաթոշակների չափերը պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտությունների (կրթական ծրագրերի) ցանկը: Նշված որոշմամբ պետության համար կարևոր և առաջնահերթ մասնագիտությունները են սահմանվել ըստ ԲՏՃՄ ուղղությունների մասնագիտական մանկավարժության կրթական ծրագրերը, իսկ կրթաթոշակի չափ է սահմանվել 70.000-77000 ՀՀ դրամը՝ ըստ առաջադիմության (գործող 5000-6500 դրամի փոխարեն), կրթաթոշակի բարձրացված չափաքանակ՝ 50 000-75 000 դրամ, սահմանվել է նաև հաշմանդամություն ունեցող անձանց և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան սովորողների համար:

- Բուհերում շարունակվում են կրթական ծրագրերի արդիականացմանը, դրանք աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման, բուհ-աշխատաշուկա կապերի ամրապնդմանը միտված, բուհերում հետազոտական բաղադրիչի մեծացմանը, մարդկային ռեսուրսների զարգացմանն ու առաջխաղացմանը (մասնագիտական առաջընթաց), կառավարման, ներքին միջավայրի և ենթակառուցվածքների բարելավմանը, միջազգայնացմանն ուղղված գործընթացներ:

Նախատեսվում է 2024 թվականի ընթացքում բուհերի ֆինանսավորման նոր բանաձևի մշակում, կատարողականի արդյունքային ցուցանիշների (KPI) բաղադրիչի ներառմամբ ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրում /2025 թվականին առնվազն 3 բուհերում/:

- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված մրցույթային հանձնաժողովի կողմից ամփոփվել են «Լավագույն

ուսանող» մրցույթի երկրորդ՝ հանրապետական փուլի արդյունքները՝ ըստ 1-3-րդ տեղերի՝ ըստ կրթական աստիճանների և յոթ ոլորտների: Հաղթող են ճանաչվել (1-3-րդ տեղեր) **36 ուսանող** (ըստ կրթական աստիճանների՝ բակալավր և մագիստրոս և 7 ոլորտների՝ բնագիտության-**6**, հասարակագիտության-**6**, հայագիտության-**6**, հումանիտար-**6**, բժշկության-**2**, ճարտարագիտության-**4** և մշակույթ-սպորտի-**6**):
Մրցույթի հաղթողները կպարգևատրվեն հավաստագրերով և ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի սահմանած մեկանգամյա անվանական կրթաթոշակներով (12.000.000 մլն. Դրամի շրջանակներում ըստ զբաղեցրած տեղերի. 1-ին տեղ՝ 410.000, 2-րդ տեղ՝ 330.000 և 3-րդ տեղ՝ 239.000 ՀՀ դրամ):

- **Գիտության և բարձրագույն կրթության ոլորտը կարգավորող իրավական դաշտի կատարելագործում, միջպետական համաձայնագրերի կնքում (Ծրագրի 26.1-26.6, 27.6-27.7 կետեր)**

2023թ. Կոմիտեն մշակել և հանրային քննարկմանն է ներկայացրել մի շարք իրավական ակտերի նախագծեր.

- 2023թ. մայիսի 3-ին ընդունվել է ««Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով պետական կառավարման համակարգում ստեղծվել է նոր մարմին՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն *(Կանոնադրությունն ուժի մեջ է մտել 2023թ. օգոստոսի 21-ին):*

Կոմիտեն իրականացնում է բարձրագույն կրթության և գիտության ոլորտի միասնական քաղաքականությունը՝ մեկտեղելով նախկինում ՀՀ ԿԳՄՍՆ ենթակայությամբ գործող Գիտության կոմիտեի, Բարձրագույն որակավորման կոմիտեի, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության գործառույթները:

- Լրամշակման փուլում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը կրկին կդրվի հանրային քննարկման: Նոր օրենքի ընդունմամբ

նախատեսվում է ներդնել կրթաթոշակի տրամադրման նոր համակարգ և մոտեցումներ՝ ուղղված ինչպես ակադեմիական և հետազոտական ձեռքբերումների համար /լավագույն ուսանողներին անվանական կրթաթոշակներ և այլն/ ուսման վարձի փոխհատուցմանը, այնպես էլ ուսման հետ կապված այլ ծախսերի /կեցության, սննդի, փոխադրամիջոցի/ ֆինանսական խրախուսմանը՝ բացառելով բարձր առաջադիմություն ցուցաբերող, սակայն սոցիալապես անապահով կամ վճարունակության ոչ բավարար մակարդակ ունեցող ուսանողների՝ անվճարունակության պատճառով բուհական կրթական համակարգից դուրս մնալու դեպքերը:

- ՀՀ կառավարության 2023 թ. ապրիլի 21-ի N 585-Ա որոշմամբ ստեղծվել է «Ակադեմիական քաղաք» հիմնադրամ և հաստատվել է հիմնադրամի կանոնադությունը, իսկ ՀՀ կառավարության 2023 թ. հոկտեմբերի 19-ի N 1802-Լ որոշմամբ հաստատվել է «Ակադեմիական քաղաք» ծրագրի հայեցակարգը, որով սահմանվել են Ակադեմիական քաղաք ստեղծելու նպատակներն ու խնդիրները, Ակադեմիական քաղաքի կլաստերները (բաղադրիչները), ուսանողների, դասախոսների, գիտնականների ու վարչական աշխատողների նախատեսվող թիվը, ինչպես նաև այն ենթակառուցվածքները, որոնք պետք է ապահովեն Ակադեմիական քաղաքի լիարժեք գործունեությունը:

2023թ. երկու անգամ կազմակերպվել է գերմանական «Gerkan, Marg and Partners» ճարտարապետական կազմակերպության ներկայացուցիչների այցը Հայաստան և հայաստանյան շահառուների հետ քննարկումներ են տեղի ունեցել Ակադեմիական քաղաքի նախագծման աշխատանքների վերաբերյալ:

2023թ. նոյեմբերի 7-ին Կոմիտեի և Լոնդոնի արվեստների համալսարանի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ բարձրագույն կրթության ոլորտում լավագույն փորձի փոխանակման և ՀՀ-ում Ակադեմիական քաղաքի հայեցակարգի իրագործմանն աջակցության նպատակով:

- ՀՀ-ում ԵՄ պատվիրակության և Կոմիտեի միջև 2023թ. հունիսի 20-ին կնքվել է 2021թ. նոյեմբերի 12-ի ՀՀ և ԵՄ միջև համաձայնագրով ստանձնած՝ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի անդամավճարի փոխհատուցման պայմանագիրը:

Ծրագրի շրջանակում 2021-2023 թթ. ՀՀ գիտական կազմակերպությունների կողմից ներգրավվել են 3,3 միլիոն եվրո դրամաշնորհային միջոցներ այն դեպքում, երբ նախորդ՝ «Հորիզոն 2020» ծրագրի ողջ տևողության՝ 2014-2020 թվականների ընթացքում ՀՀ կազմակերպությունները ներգրավել են ընդամենը 4,2 միլիոն եվրո դրամաշնորհային միջոցներ:

2023 թ. դեկտեմբերի 5-ին և 6-ին Գիտական ծրագրերի ինտեգրման աջակցության հիմնադրամը կազմակերպել է նաև Հետազոտությունների և նորարարության հարցերով ՀՀ-ԵՄ համատեղ կոմիտեի երկրորդ նիստն ու դրան հաջորդող տեղեկատվական օրերը:

- 2023 թ. հունվարի 29-ին ստորագրվել է «ՀՀ կառավարության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության կառավարության միջև գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր:

- 2023թ. հունիսի 7-ին Կոմիտեի և Վրաստանի Շոթա Ռուսթավելիի անվան գիտության ազգային հիմնադրամի միջև ստորագրվել է «Գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության մասին» ծրագիրը, որով հստակեցվել և ամրապնդվել են 2022 թ. հոկտեմբերի 20-ին կողմերի միջև ստորագրված մտադրությունների հուշագրի դրույթները: Ծրագրով նախատեսվում է երկու տարին մեկ անգամ հայտարարել գիտական նախագծերի աջակցության մրցույթ, որի արդյունքում կֆինանսավորվեն տարեկան մինչև 5000 ԱՄՆ դոլարին համարժեք բյուջեով երկամյա նախագծեր:

- Երկկողմ համագործակցության մասին հուշագրեր են նախապատրաստվում ՉԺՀ գիտության և տեխնոլոգիաների նախարարության և Մոլդովայի գիտությունների ակադեմիայի հետ:

- **Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորման նպատակով մրցույթների կազմակերպում**

(2024թ. հունվարի դրությամբ)

№	Մրցույթ	Հայտարարման ժամկետ	Ներկայացված հայտերի քանակ	Ֆինանսավորման երաշխավորված հայտերի թիվ	Նշումներ
2021 և 2022թթ. ընթացքում հայտարարված մրցույթների արդյունքների ամփոփում					
1.	ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի և Գերմանիայի կրթության և հետազոտությունների դաշնային նախարարության կողմից անցկացվող գիտական հետազոտությունների հայգերմանական համատեղ թեմաների աջակցության «ՀՀ ԿԳՄՍՆ ԳԿ – ԳԿՀԴՆ - 2022» մրցույթ	2021 թ. հուլիս	10	5	Մրցույթի արդյունքների ամփոփումը գերմանական կողմի խնդրանքով կատարվել է 2023 թ. ընթացքում, ֆինանսավորումը սկսվելու է 2024 թ.-ից:
2.	Երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթի հրավեր	2022թ. սեպտեմբեր	34	6	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թ. փետրվարից
3.	Փորձարարական մշակումների նախագծերի (Experimental Development Projects) հայտերի ընտրության մրցույթի հրավեր	2022 թ. հոկտեմբեր	11	6	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թ. մարտից
4.	Գիտական կադրերի (PhD, PostDoc) վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթ (1-ին փուլ)	2022 թ. նոյեմբեր	8	5	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թվականից
5.	Գիտական կադրերի (PhD, PostDoc) վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթ (2-րդ փուլ)	2022 թ. նոյեմբեր	7	5	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թվականից

6.	Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության մրցույթ	2022 թ. Դեկտեմբեր	114	54	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թվականի մայիսից
7.	«Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր 2023» մրցույթ	2022 թ. դեկտեմբեր	9	5	Ֆինանսավորումն սկսվել է 2023 թ. հունիսից
2023թ. ընթացքում հայտարարված մրցույթներ					
1.	Գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթ (1-ին փուլ)	2023 թ. հունվար	7	6	Փաստացի ֆինանսավորվել է 5 ծրագիր, 1 շահառու հրաժարվել է
2.	Գիտական կազմակերպությունների աշխատակիցների մասնագիտական վերապատրաստման ծրագրերի հայտերի ընտրության մրցույթ (2-րդ փուլ)	2023 թ. հունվար	5	1	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թվականից
3.	«Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր 2023» մրցույթ	2023թ. հունվար	48	15	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թվականի սեպտեմբերի 1-ից
4.	«ՀՀ գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc» ծրագիր 2023»	2023թ. փետրվար	9	8	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թ. օգոստոսից
5.	«Արցախի հետ համագործակցության ծրագիր-2023» մրցույթ	2023թ. ապրիլ	7	4	ֆինանսավորումը սկսվել է 2023 թվականի հուլիսից
6.	«Ասպիրանտների եվ երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2023» մրցույթ	2023թ. մայիս	43	42	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թվականի հոկտեմբերից

7.	«Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրմանն աջակցության ծրագիր 2023/2» մրցույթ	2023 թ. հունիս	6	1	Ֆինանսավորումն սկսվել է 2023 թ. նոյեմբերից
8.	Գիտական կենտրոնները ժամանակակից սարքավորումներով վերազինելու նպատակով գիտական սարքերի/սարքավորումների գնման հայտերի ընտրության մրցույթ	2023 թ. հունիս	119	41	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թվականի նոյեմբերից
9.	«Գիտական խմբերի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցություն - 2023» մրցույթի	2023 թ. հունիս	20	16	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թվականի հոկտեմբերից
10.	«ՀՀ գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc» ծրագիր 2023/2»	2023թ. հուլիս	4	4	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թ. նոյեմբերից
11.	Երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական նախագծերի հայտերի ընտրության 2023/2 մրցույթ	2023թ. հուլիս	23	9	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թ. նոյեմբերից
12.	Գիտական ստորաբաժանումների նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու հայտերի ընտրության մրցույթ	2023թ. հոկտեմբեր	99	60	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թ. դեկտեմբերից
13.	«Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպություններում արտերկրի գիտնականների «PostDoc-Armenia 2024»» մրցույթ	2023թ. նոյեմբեր	3		Արդյունքներն ամփոփվելու են 2024 թվականին
14.	«Հայաստանի Հանրապետության գիտական համայնքին արտերկրի գիտնականների ինտեգրում 2024» մրցույթ	2023թ. նոյեմբեր	3		Արդյունքներն ամփոփվելու են 2024 թվականին
15.	«Մասնագիտական վերապատրաստում 2024» մրցույթ	2023թ. նոյեմբեր	14		Արդյունքներն ամփոփվելու են 2024 թվականին

16.	«Հեռավար լաբորատորիաների հիմնադրում 2024» մրցույթ	2023թ. նոյեմբեր	49		Արդյունքներն ամփոփվելու են 2024 թվականին
17.	«Հասարակական գիտությունների, հայագիտության և հումանիտար գիտությունների բնագավառներում հետազոտություններ - 2024» մրցույթ	2023թ. նոյեմբեր	42		Արդյունքներն ամփոփվելու են 2024 թվականին
18.	«Հեռանկարային ուղղություններով հետազոտական նախագծեր 2024» մրցույթ	2023թ. նոյեմբեր	62		Արդյունքներն ամփոփվելու են 2024 թվականին
19.	«Կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագիր 2024» մրցույթ	2023թ. նոյեմբեր	47		Արդյունքներն ամփոփվելու են 2024 թվականին